

դռները թէեւ ամուր փակած էին, բայց շուտ կը ջախջախուէին ատոնք պարտատէրներու հարուածներուն տակ. ապտակ, թուք, ծեծ, յիշոց, ծորուք փետեւ եւայլն, եւայլն, հասարակ բաներ եղած էին. նոյն իսկ՝ ժամարարի ձեռքէն սկիհ յափշտակուած էր պարտքի փոխարէն: Մարդ չկար երուսաղէմայ մէջ որ առնելէք չունենար Ս. Աթոռէն. եւ միաբանները այնքան թշուառացան որ հայ անունը նախատինք մը կը համարուէր իրենց. «*մայէր ու աւել զինն քու յազգէն հայոց տառապն:*» Երուսաղէմ, որուն բոլոր կալուածները բռնաբարուած, բոլոր անօթներն ու սպասները զբաւուած էին, աշտուճ հացի կարօտով կը տաղտապէր: Ս. Յակոբայ վանքը այս վիճակին մէջ էր, երբ Վոլոտին առաջարկուեցաւ Երուսաղէմ երթալ՝ իրաց վիճակին դարման մը գտնելու համար:

Սահակ պատրիարք իսկապէս փափաքեցաւ Ս. Յակոբայ Աթոռին ծառայութիւն մ'ընել: Պատրիարքին խորհրդականները Մահտեսի Երուսթիւն Մուրատեան, Մահտեսի Երուսթիւն Թէվէքէլեան, Մահտեսի Սարգիս, Մահտեսի Իսրայէլ, Մահտեսի Լոթվին, «*եւ այլ բազումք*», Պատրիարքին հետ միասին ստիպեցին Վոլոտը իբր «*Արեւմտեալ եւ Արեւել*» Երուսաղէմ երթալ՝ հակառակ իր կամքին: Բայց այնքան անկեղծ էր եղած առաջարկը, այնքան պատրաստակամութիւն ցոյց կու տային այս դործունեայ վարդապետի կարգադրութիւնները գործադրելու որ Վոլոտ սիրով զնաց Երուսաղէմ:

Վոլոտ 1713—14ին, Մեծ պահքի մէջ, ողջունեց «*կաթնամեղրաբուղէ*» քաղաքը. անմիջապէս գործի ձեռնարկեց. ածուրդի դրուած սրբավայրերն ու սուրբ անօթներն ազատեց. այսպէս «*սակաւ ինչ շնչառութիւն եղեւ սրբոյ Տանս այնորիկ*»: Իր ներկայութիւնը երկնային մխիթարութիւն մ'եղաւ Ս. Յակոբի վանքին համար: Քրիստոնեայ, ոչ-